

ՀԱՄԱՌՕՏ ԵՒ ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ՄԵՐ ԵՒ ՔՈՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՏՕՆԱՅՈՅՑԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԵՒ ՍԱՂԻՄԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ ՆԵՐ

ՏՕՆ ՎԵՐԱՅՄԱՆ Ս. ԽԱՉԻՆ: Հասարակ ժողովուրդին կողմէ Խաչվերաց անուանով ծանօթ այս տօնը մեծագոյնն է Խաչին նաւիրուած տօներուն, անոր դերեգործի յիշատակը պանծացնող: Տօնը տւելի մեծ հանդիսաւորութեամբ կը նշուի Արեւելեան — և ի մասնաւորի Օրթոտոքս — Եկեղեցիներու կողմէ, քանի որ դէպքին հերոսը՝ Հերակլ, կայսր էր Բիւզանդիոսի: Դէպքին ընդունուած թուականն է 629 (14 Սեպտեմբեր), թէև ոմանք զայն կը դնեն 628 ին, որ թուականն է Պարսից վրայ տարուած յաղթանակին: 14 Սեպտ. ր միւս բոլոր առաքելական Եկեղեցիներու կողմէ ընդունուած թուականն է տօնին, իսկ մեր Եկեղեցին զայն կը տօնակատարէ անոր մօտաւոր (1) — 17 Սեպտ. ի միջև (ինկոդ) Կիրակիին, որ կը զուգադիպի Ն. Տ. Սեպտեմբեր ամսոյ վերջին Կիրակիին: Ս. Տեղեաց մէջ Թրքական տիրապետութեան չրջանէն ի զօրու իրաւակարգին (Status Quo) տրամադրութեան համաձայն, Ս. Յարութեան Տաճարէն (հանդիսավայրը այդ դէպքին) ներս պաշտամունք կատարելու իրաւունք ունեցող 5 համայնքներէն Հայերը միակն են որ (ինչպէս է պարագան Աւագ Ուրբաթի Թաղման Կարգին) տօնի օրը հանդէս կատարելու իրաւունք չունին հոն: Պատճառը այն է հաւանաբար, որ տօնը Կիրակիի զուգադիպած տարիներուն կրնայ խաչածնում յառաջ գալ Յունաց հետ (Լատինք կը շարժին Նոր Տօմարով, իսկ Ղպտիք և Ասորիք արգելք մը չեն, որովհետեւ ո՛չ Ս. Գերեզմանին վրայ Ս. Պատարագ մատուցանելու և ոչ ալ անոր շուրջը առանձին թափօր դառնալու իրաւունքը ունին): Ատոր համար է որ մօզի իրաւունք է տրուած տօնէն երկու շաբաթներ հետ կատարուող վարագայ Խաչի տօնը հանդիսաւորել Ս. Յարութեան Տաճարի մէջ:

Խաչվերացը մեր մօտ ունի իւր շաբաթագոյնքը, իսկ Շաբաթ օրն է Տօն Եկե-

ղեցոյ ի Գաւակասիս Ս Խաչի, նմանազութեամբը Յունաց, որոնք 13 Սեպտ. ին կը նշեն Նաւակատիքը Սուրբ Յարութեան Տաճարին, կատարուած 335 ին, Կոստանդիոնոս թագաւորի և Հեղինէ մայր-թագուհիի օրով: Այդ առթիւ ամէն տարի Խաչվերացի նախօրեակին (26 Սեպտ., որ պահոց օր է) կախկապստկան Պատարագ կը մատուցանեն Տաճարի իրենց բաժնին մէջ: Ղպտոց տօնացոյցն ալ այդ օրուան դիմաց ունի Վաւակատիք խորանաց Ս. Գերեզմանի Տաճարին:

14 Սեպտեմբերի առաւօտուն, Լատիններ կը տօնեն Խաչվերացը, պատարագելով Գողգոթայի իրենց բաժնին մէջ, որմէ հետք Ս. Խաչավայտի մասունքը թափօրով կ'իջնեն վար, և անցնելով Ս. Գերեզմանին դիմացէն կը տանին զայն իրենց բաժինը, ուր բոլորը կը մօտենան ի համբոյր Կենաց Փայտին:

Յոյներ և միւս Արեւելեան Եկեղեցիներ Խաչվերացը կը տօնեն հոս 27 Սեպտեմբերին: Յոյներ տօնին կը կցեն նաև յիշատակը Խաչգիւտին: Այդ առթիւ իրաւունք ստացած են, տարուան մէջ միակ անգամը ըլլալով (Հայեր երկիցս ունին այդ իրաւունքը), կարճ արարողութիւն մը կատարելու Լատինաց սեփականութիւնը եղող Գիւտ Խաչի այրին մէջ: Հանդիսութիւնները կը սկսին նախօրէ օր կէսօրէ հետքի «Հրաշափառ»ով, որուն կը յաջորդէ հանդիսաւոր նախատօնակ: Իսկ տօնի առաւօտուն իրենց բաժնին մէջ հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցանելէ հետք կ'իջնեն Խաչգիւտի այրը և ապա երիցս թափօր կը դառնան Ս. Գերեզմանին շուրջ, հանդիսապետը Ս. Խաչավայտի մասունքը գլխուն վրայ բարձր բռնած: Հանդիսութիւնները վերջ կը գտնեն Գողգոթայի վրայ կատարուած Անկուսանով: Ըսենք նաև թէ նախատօնակէն հետք Ասորիներ կ'այցնելեն Քրիստոսի բանտը, Խաչգիւտի այրը և Սուրբ Գողգոթա:

Խաչվերացը հաս կը թօնակատարենք Ս. Գալստիանց Մայր Տաճարին մէջ, Նախորդ օրը, նախաթօնակէն հաք, Կենաց Փայտի մասունքը թափօրով կը փոխադրուի Աւագ Խորան, ուր կը մնայ 24 ժամ: Գիշերասկիզբին կը կատարուի տարուան վերջին Հսկումի արարողութիւնը:

Խաչվերացը վերջին Տաղաւարն է մեր Եկեղեցիին: Աւագ Խորանին վրայ մատուցուած հանդիսաւոր Ս. Պատարագի աւարտին, հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի Կարապետ և Գրիգոր Մելքոնեան եղբայրներու հոգին համար, որոնք իրենց ամբողջ հարստութիւնը կտակեցին ազգին, որով կառուցուեցաւ Մելգոնեան կրթական Հաստատութիւնը ի Կիպրոս:

Կէսօրէ հաք կը կատարուի օրուան յատուկ մեծահանդէս Վնդաստանը, որ փառաւորագոյն արարողութիւններէն մին է մեր Եկեղեցւոյ և որմէ հաք հինգ ամիս (մինչև Տեառնընդառաջ) չի կատարուիր Վնդաստանը:

Յաջորդ օրը վերջին Յիւստակ մեղեղոյն է տարւոյն, ուր ատենօք տարեկան վերջին Պատարագը կը մատուցուէր Ս. Փրկչի գերեզմանատան կից համանուն վանքի մատրան մէջ: Այժմ Ս. Պատարագը կը մատուցուի ի Ս. Գլխադիր, որմէ հաք կը կատարուի հանգստեան պաշտամունք:

15 Սեպտ. Լատինաց մօտ տօն է եօթն ցաւոց Սուրբ Կոյսի, քանի որ խաչի ոտքին է որ Տիրամայրը կրեց մեծագոյն վիշտը իր Կեանքին:

Խաչվերացի յաջորդ Կիրակին Յայներ կը պատարագեն քաղաքիս առեմտեկողմը (հրէական բաժնի մէջ) գտնուող Խաչավանքի եկեղեցիին մէջ: Վանքը ատենօք կը պատկանէր Վրացիներուն: Ըստ աւանդութեան, հոն գտնուող ծառէ մը առնելու է Քրիստոսի խաչափայտին իւթեղէնը: Վանքին մէկ մասը Յայներ վերջերս վերածեցին եկեղեցական թանգարանի:

Մեր մօտ Խաչվերացի յաջորդ եօթնեակը յատկացուած է Խաչի և Եկեղեցւոյ տօներուն, քանի որ երկուքին ալ խորհուրդները զիրար կը լրացնեն: Այսպէս, Բշ.ը, Ուրբաթը և Շաբաթը նշանակուած են Տօն Խաչի, Իսկ Դշ.ը, Դշ.ը և Եշ.ը՝ Տօն Եկեղեցւոյ:

Շաբաթ օրուան Պատարագը կը մատուցուի Ս. Գլխադրի վերեւ գտնուող Ս. Նշան (Խաչ) մատրան մէջ:

Կիրակին է Բարեկենդան Վարագայ Ս. Խաչի պահոց, իսկ Երկուշաբթի կը վերսկսի երկու շաբաթներէ ի վեր ընդհատուած շաբթը սրբոց տօներուն: Կը նշուին Ս. Մամաս, Փիլիկսիմոն և Սիմէոն Սիւնակեաց: Առաջինը Յունաց մօտ կը յիշուի 2/15 Սեպտ.ին, երկրորդը եթէ Փիլիմոնն է (որուն իր Թաղթներէն մին ուղղած է Պօղոս առաքեալ)՝ 22 Նոյմ. /5 Դեկտ.ին, իսկ վերջինը՝ առաջինէն օր մը առաջ, այսինքն Սեպտեմբերի ամսամուտին, երբ կը սկսի իրենց եկեղեցական տարին: Լատինաց մօտ վերջինը միայն կը յիշուի, այն ալ 5 Յունուարին:

Երեքշաբթի տօն է Սրբոց Կրօնացեաց Փեբրոնեայ եւ Մարիանեայ եւ Շուսանայ՝ զոսեւ մեծին Վարդանայ: Առաջինը Յունաց մօտ կը նշուի 25 Յունիս/8 Յուլիսին, երկրորդը՝ 17/30 Յուլիսին, իսկ վերջինը հայազգի է:

Հինգշաբթի կը տօնուին Բարաղամ, Անքիմոս և Նրսիս հայրապետները: Անթիմոս Եպիսկոպոս մը կը յիշուի Յունաց մօտ 3/16 Սեպտ.ին: Չինք Կարծեր որ վերջինը ըլլայ Լիսնի (Յրանսա) Եպիսկ. Իրանոսը կամ Իրենիոսը (Յունարէն լիւրինիս = Խաղաղութիւն բառէն), զոր կը յիշատակուի Լատինաց մօտ 28 Յունիսին:

Վարագայ Խաչի շաբաթապահքը տւարտելէ հաք, Շաբաթ օր կը տօնուի յիշատակը Սրբոց՝ Դեորդայ զօրավարին, Աղսիսոսի եւ Ռոմանոսի երկեցողին: Սուրբ Դէորդ մեծ հռչակ և ժողովրդականութիւն կը վայելէ թէ՛ Արեւելի և թէ՛ Արեւմուտքի մէջ: Ոմանք անոր կու տան Վրամարտիկ մակդիրը: (Կ'արժէ յիշել որ նոյն բառով սկսող և սուրբին ձօնուած շարական մը ունեցած է մեր Եկեղեցին, զոր, անհասկնալի պատճառներով, դուրս մնացած է մեր Շարականցէն, և տտորտեղը բռնած է, իբրեւ Օրհնութեան շարական, Ս. Սարգսի ձօնուած Վեհմաստուր Երրորդութեանն շարականը — անուանափոխութեամբ անշուշտ: Տեսնել այս մասին Մայր Աթոռոյ Օրացոյցի ծանօթութիւնը՝ նախաթօնակին դրուած:)

կապաղաժկեցի այս սուրբին մարտիրոսացման թուականը կը նկատուի Ապրիլ 23-ը: Անկլիքան եկեղեցին զայն ընդունելով իբրև իր պաշտպան սուրբը (Patron Saint), այդ օրը հռչակուած է Ազգային Տօն Անդլիոյ: Երուսաղէմի Անկլիքաններու Մայր Տաճարը կոչուած է մեծ այս սուրբին անունով:

Բիզանդական եկեղեցիները (այս անունով պիտի ճանչնանք այսուհետեւ թէ՛ Յոյն-Օրթոտոքս և թէ՛ Յոյն-Կաթոլիկ եկեղեցիները) երկիցս կը տօնեն սուրբին յիշատակը, երկրորդը՝ 3 Նոյեմբերին, զոր կը նկատուի սուրբին նշխարաց փոխադրութեան թուականը: Ըստ աւանդութեան, սուրբին նշխարները Փոքր Ասիայէն Պաղեստին փոխադրուելով, թաղուած են Լիտտ գիւղակին մէջ, ուր փառաւոր տաճար մը ունին Օրթոտոքս Յոյները և ուր ամէն տարի Նոյեմբերի 16-ին երկրի ամէն կողմերէն բազմաթիւ ժողովուրդ կը փութայ յուխտ սուրբի գերեզմանին: Մատաղանք ալ կը զենուին հանդիսաւոր Ս. Պատարագի ընթացքին:

Իսկ սուրբին մարտիրոսացման օրը, հանդիսութեանց կեդրոնավայրն է Բեթղհէմէն Քերբոն երկարող ճամբուն վրայ, Խաւէր (տեղացի Արաբներու կողմէ սուրբին տրուած մակդիր մը) գիւղի եկեղեցին, ուր ամէն տարի Մայիսի 6-ին բազմերամ ժողովուրդի ներկայութեամբ կը մատուցուի հանդիսաւոր Ս. Պատարագ:

Ս. Գէորգ միակն է սուրբերէն (բացի անշուշտ Սուրբ կոյսէն) որուն անունով երկու եկեղեցիներ (վանքերով միատեղ) գոյութիւն ունին Երուսաղէմի մէջ: Մին անոնցմէ, քիչ մը տարօրինակ երևոյթ, կը գտնուի Հայոց Թաղի մէջ, իսկ միւսը կ'աւանդէ Ֆրանչիսկաններու Մայրավանքին: Զոյգ տօներու օրերուն, յիշալ զոյգ եկեղեցիներուն մէջ ալ տեղի կ'ունենան նախատօնակ և Ս. Պատարագ: Իսկ ամբողջ Ս. Երկրի մէջ մէկ ու կէս տասնեակը կ'անցնի թիւը սուրբին անունովը կոչուած Յունաց վանք-եկեղեցիներուն:

Կ'արժէ յիշել նաև թէ Իսլամներ իսկ յարգանք ունին Ս. Գէորգի նկատմամբ: Այսպէս, Գարնան տօնը կը կոչեն *hagkiliq* (լեզու աղաւաղումն է լոյին, նուշ իմաստով,

հաւանաբար այդ եղանակին կանաչ նուշի առատութենէն յառաջ եկած), իսկ աշնան տօնը՝ *hagriliqss* (ակնարկելով գիւղին):

Ղպտիններ ալ մեծապէս կը յարգեն յիշատակը սուրբին: Բազմաթիւ են անոր անունովը կառուցուած եկեղեցիներն ու վանքերը Եգիպտոսի մէջ: Հոս ալ ունին վանք ու եկեղեցի՝ Ս. Գէորգի ձօնուած, որուն անունով կոչուած է գիմացի փոքրը: Անոնք ալ երկիցս կը տօնեն անոր յիշատակը, մին 1 Մայիսին, իսկ միւսը՝ Յունաց հետ՝ 16 Նոյմբ.ին, երբ փառաւոր հանգէտով մը մէջտեղ կը հանեն սուրբին աջ-մատունը և վարդաջուրով լուսալէ ետք թափօրով ու ծնծղաներով կը շրջեցընեն տեղոյս իրենց եկեղեցիին մէջ:

Հոն է որ սուրբի յիշատակի նախօրեակին կը մեկնի Միաբանութիւնը կատարելու նախատօնակ, իսկ յաջորդ առտու՝ մատուցանելու Ս. Պատարագ, որմէ ետք Միաբանութիւնը կը պատուասիրուի Ղըպտոց Հոգեշնորհ Վանահայրէն: Այս կարգադրութիւնը եղած է, որովհետեւ Ղպտի եկեղեցին դաւանակից է մերինին:

Հոս, Ս. Յակոբեանց Մայր Տաճարի ներքին գաւթի զոյգ սեղաններէն մին կը կոչուի Ս. Գէորգայ անունով: Անոր գիմաց կը կատարուի առաւօտեան ժամերգութեան վերջին մասը տօնի օրը, իսկ Ս. Պատարագը կը մատուցուի յաջորդ Շաբաթ, 72 առակերոց տօնի օրը:

Այս վերջինին յաջորդ օրն է (Կիր.) որ կը կատարուի Ռեմիէի Ս. Գէորգայ վանուց տարեկան ուխտագնացութիւնը և մատաղօրնէքը, որ նախապէս կը կատարուէր տօնի վաղորդայնին: Շաբթուան մը ուշացումը եղած է չխաչածեալու համար Վարդապետացի մեծ տօնը: Վանքը Սուրբ Գէորգ կոչուած է հաւանօրէն մօտիկը ըլլալուն Լիտտի կամ Լիտտայի:

Մեծ սուրբին հետ մեր եկեղեցիին կը յիշատակէ Ալոկիսոսն ու Ռոմանոսը: Վերջինը կոչուած է «Երգեցող»: Իր գրիչէն ելած է «Տիրամօր Գովասանք» կոչուած երկար և գոհար աղօթքը, զոր Բիւզանդական եկեղեցիներ կ'երգեն Մեծ Պահոց հինգ Ուրբաթ երկուներուն: Կը տօնուի 18 Նոյեմբերին:

(Շար.՝ 12)

Գ. Ճ.